պատերին նկարուած էին արագիլներ: Անկիւնում զետեղուած էր սիրուն երկթեւ ճենապատը եւ մի փոքրիկ թաղար՝ մէջը մանրադիտական մի ծառով: Սենեակի խորքում պատի մէջ ծալքն էր, ուր ցերեկները անկողիններն են դարսում: Ճապոնացին, ինչպէս յայտնի է, կահ-կարասի չի սիրում, ասելով թէ դրանք փոշի հաւաքելուց զատ ուրիշ բանի պէտք չեն:

Անկողինը փռում են գետնին խսիրի վրա. ճաշում են չոք նստած եւ ամեն մէկի առաջ մի մի ցածլիկ փոքրիկ սեղան, կամ յաճախ ուղղակի գետնին:

Սենեակից դուրս գալով, մտանք ցանկով շրջապատած փոքրիկ բագիկը, իր մանրիկ պարտէզիկով, ուր բանդարկուած էր պտուղներով ծանրաբեռնուած մանդարենի մի ծառ, կարծես վանդակի մէջ:

Այդ պարտէզիկի կենդրոնում ցոլցլում էր մի աւելի փոքրիկ լճակիկ, մէջն էլ մանրադիտական մի ժայռիկ, որի վրա հպարտ վեր էր բարձրանում մի մանր-մանր գաճաճ ծառիկ:

Ճապոնացին շատ է սիրում բնութիւնը. գիւղերում նա աշխատում է շինել իր բնակարանը կարկաչուն առւակի ափին, կամ սարի սիրուն լանջին, որտեղից լայն գեղեցիկ տեսարան է բացւում: Իսկ քաղաքում՝ հեռու այդ բոլորից նա ուզում է բնութեան գոնէ մի նմուշը, մի փոքրիկ կտոր իր մօտը ունենայ:

Ճապոնացու տանը, թէ՛ ներսը, թե՛ բագում, ամեն բանի վրա մի մասնաւոր դրոշմ կայ գոհանակութեան, չափաւորութեան եւ գեղարւեստական պարզութեան: